

# Հ Է Ն Ր Ի Կ Ի Բ Ս Է Ն \*

(Շարունակութիւն)

«Բրանդ» (ամեն ինչ կամ ոչինչ սկզբունքի հետեանքները.— Բրանդի  
աւերը, «կրօնը» և «եկեղեցին».— «Սառցային» «եկեղեցու» ճանապարհին.—  
Փորձիչը.— *Deus caritatis*.— Գրամայի միտ տիպերը.— Պատուր Լամմէրա.—  
Իդէալիզմի վերլուծումը).— «Պէր Պիւնն» (Պէր Գիւնտի հիւանդոս երևա-  
կալութիւնը.— Նրա *fixe idée*-ն.— Պէրի ետականութիւնը.— Պէրը Արաբիայ-  
ում և Եգիպտոսում.— Պէրի «կայտութիւնը».— Նրա հիասթափութիւնը և  
ինքնաճանաչութիւնը.— Բրանդը և Պէր Գիւնտը իրրև ամբարտնոսները.—  
Պէր Գիւնտը իրրև նորվեգական ազգի ներկայացուցիչը).— Մրհասատաղաւ-  
րեան միութիւնը (Շտայնհօֆի ճառը.— Նրա ցինիզմը և պարզաստու-  
թիւնը).— Բօլման.— Իսթէնի վերաբերմունքը դէպի քաղաքականութիւնը.—  
«Առայտ» և «Պալիտիացի» (Յուլիանոսը իրրև բարեպաշտ քրիստոնեաւ.—  
Յուլիանոսը Աթէնքում.— Նրա հիասթափութիւնը, հակաքրիստոնէական  
տրամադրութիւնը և միտակական հակումները.— Յուլիանոսը Մաքսիմոսի  
մօտ.— «Երրորդ թագաւորութիւնը».— «Անհրամեշտութեան զայրոյթի երեք  
անկիւնաքարերը».— Յուլիանոս իրրև զահածառնոց և կայսր.— Լեթանա-  
սութեան վերականգնումը և հալածանք քրիստոնեաների դէմ.— Ղայսր-  
Աստուած և Աստուած-կայսր.— Յուլիանոս իրրև բացասական մեծութիւնը.—  
Անհատական ազատութիւնը և տիեղերական կամքը).— Իսթէն (շոտեոս)

## IV

Յաւիտենական քաղաքի խորհրդաւոր, միտակ մթնոլոր-  
տում իբրէն 1866 թուին դրեց իր նշանաւոր դրամատիկական  
բանաստեղծութիւնը— «Բրանդ»: Իսկ մի տարուց յետոյ՝ «Պէր  
Գիւնն»: Այս երկու դրամաներով իբրէն ահագին հեղինակու-  
թիւն ձեռք բերեց իր հայրենիքում, որից նա համարեա իր ե-  
րեսը շուտ էր տուել:

«Սիրոյ կատակերգութեամբ» իբրէն արդէն սկսել էր իր  
ժամանակակից ազգային կեանքը նկարագրել Օտարութեան  
մէջ նա անշուշտ աւելի լայն հայեացքով էր վերաբերուելու դէ-

\*) ՑԻՍ ԱՄուրճ № 2.

պի իր հայրենիքը՝ աւելի նուրբ դիտողութեամբ և առանց կանխակալ կարծիքների Պէտք է նկատել սակայն, որ Իրաքնի դրամաների նիւթը թէև աղգային կեանքից է վերգուած՝ այնուամենայնիւ նրանց մէջ շօշափուած խնդիրները կրում են ոչ միայն բուն նորվէզական, այլ և ընդհանուր, հանրամարդկային բնաւորութիւն: Սա մենք տեսանք հէնց Վիբոյ կատակերգութեան» մէջ, իսկ «Բրանդի», մասամբ և «Պէր Գիւնտի» մէջ այս գիծը աւելի որոշ կերպով կ'երևայ:

Բրանդը ուժեղ կամքի և անընկճելի հաւատքի տէր մի հոգևորական է, որ անյողզող հետեղականութեամբ դէպի նպատակն է դիմում: Նա կամքի հերոս է, մի անվհատ իդէալիստ, որ ձգտում է մաքրել, վերակենդանացնել ամբողջ մարդկութիւնը. մի մարգարէ, որ մեռած տափ փոխարէն կենդանի կրօն է քարոզում: Բայց այս «կենդանութիւնից» մահուան, անպայման նահատակութեան հոտ է բուրում «Ամե'ն ինչ կամ ոչ ինչ»—ահա այս չոր, խստասիրտ իդէալիստի նշանաբանը: Մռայլ է, քաղքարոտ, ցրտաշունչ Բրանդի հայրենիքը, և այս խիստ բնութիւնը դրել է իր դրոշմը այս սեռագրատ իդէալիստի վրայ, որի սղին ջերմութեան ոչ մի ճառագայթ չէ արտացոլում «Բոյնդէն սուրը ձեռքին» նա փոթորկի և թանձր մտախռովի միջով առաջ է գնում՝ մարդկութեան համար նոր շաւիղներ հարթելու: Նրան ողորում, մղում է տալիս մի խոր գիտակցութիւն—որ ինքը աստուածընտիր մի պաշտօնակց է և նոյն իսկ գործիք նախախնամութեան ձեռքին:

Թէ դպրոցում և թէ ընտանիքում Բրանդն իրան խորթ, օտար էր զգում: Մանուկ ժամանակուանից ընտանեկան յարկում նա ակնատես է լինում մի զղուելի երևոյթի—հօր անշնչացած դիակի մօտ նրա մայրը հիւանդութեան անկողինը թողած՝ կողոպուտով, յափշտակութեամբ է զբաղում: Նիւթական պաշտամունքի այս գարշելի տեսարանը շատ խոր և անջնջելի տպաւորութիւն պիտի թողնէր փոքրիկ մանուկի վրայ. նա իր ամբողջ էութեամբ, հոգեկան արամագրութեամբ դառնում է նիւթապաշտութեան ոխերիմ հակաակորդ: Իր պարտականութեան համար նա չէ խնայում իր կեանքը. նա չէ վախենում ոչ ձիւնից և ոչ մառախուղից և երբ ամենքը փոքրօգի երկչտութեամբ հրաժարում են մի թշուառ կնոջ պաղատանքը լսելու՝ ծովի միւս ափումը օգնութեան հասնելու, այն ժամանակ անվեհեր Բրանդը չը նայելով կատաղի փոթորկին՝ հրամայում է արձակել մակոյլը: Այս քաջասրտութեամբ և անձնուէր մարդասիրութեամբ նա զբաւում է Ադնէսին՝ իր ապագայ կնոջը, որին և հողեպէս միանգամայն կերպարանափոխում է:

Երբ Բրանդի ծննդավայրը տառապում է ծանր սովի ճիրաննե-  
րում՝ նա իր հողեղէն քարոզներովն է կերակրում սովեալներին:  
Բայց այս խտտախրատ քահանայի նիւթական զոհարերութիւնը  
յանուն իդէալի մինչև այն աստիճան է հասնում, որ նա զոհում  
է իր մօրը, կնոջը և երեխային:

Մայրը խորհուրդ է տալիս Բրանդին հրաժարուել իր  
«անմիտ» դիտաւորութիւններից և միայն ապրելու մասին մտա-  
ծել—«պաշտպանիր կ'անքդ. ժառանգի առաջին պարտակա-  
նութիւնն է ապրել», բայց Բրանդը լաւ է գիտակցում թէ այս  
միակ խօսքը—ապրելը—«մեղքերի ինչ վիթխարի կոյտ է ամիո-  
փում իր մէջ», նա զգուանքով երեսը շուռ է տալիս և իր  
մօրից և նրա թողնելիք ժառանգութիւնից—«դեռ երեխայ ժա-  
մանա՛կ ես քեզ հակառակում էի, ես որդի չէի, ոչ էլ դու մայր.  
մենք երկուսս էլ դատաստանի ենք սպասուած: Նա կծու յան-  
դիմանութիամբ երեսովն է տալիս իր վարմունքը հօր մահ-  
ուան ժամանակ և յայտնում է, որ միայն բացարձակ զղջումն  
կամ մահը կարող է իրանց հաշտեցնել: Ահա մահուան անկող-  
նում պառաւ մայրը մտածում է իր հողու փրկութեան մասին  
և մարդ է ուղարկում իր որդու ետևից. բայց վերջինս մի  
պայման է առաջարկում—հրաժարուել իր ամբողջ հարստու-  
թիւնից: Մի պատգամաբեր իմաց է տալիս, որ նա զոհում է  
իր հարստութեան կէսը. բայց Բրանդը ամբողջն է պահան-  
ջում—«Յայտնեցէք նրան, որ ոսկէ հորթի ամենափոքր մասնի-  
կըն անդամ խլում է նրա հողու փրկութիւնը», Գալիս է եր-  
կրորդ պատգամաբերը, յայտնելով, որ նա զոհում է իր հարստու-  
թեան  $\frac{9}{10}$  մասը.—«Ո՛չ բոլորը», հարցնում է Բրանդը, «այն  
ժամանակ նա չի տեսնի ո՛չ քահանայի և ո՛չ հաղորդութեան  
երես: «Ամէն ինչ կամ ոչինչ»—այս է անդրդուելի որդու պա-  
հանջը: Նրա ցանկութիւնն է, որ իր մայրը միանգամայն մերկ  
մտնէ գերեզման—«քանի որ նրա գրպանը դեռ լիքն է, նա  
իզուր է Յօբի նման մոխրի վրայ նստում: Հետևանքն այն է  
լինում, որ մայրը մեռնում է առանց հաղորդուելու և իր որդու  
հետ հաշտուելու:

Բրանդ նոյն զոհարերութիւնը պահանջում է նաև իր կնո-  
ջից. և Ագնէսը յիրաւի շուտով հրաժարում է աշխարհիկ ցան-  
կութիւններից և համակում իր ամուսնու իդէալիզմով, Բրանդը  
թէև այն կարծիքի է, որ «մարդկութիւնը անհնարին է գրկել,  
քանի որ մեկիւն չես սիրել»—այնուամենայնիւ նկատում է,  
«այն ինչ որ մարդիկ սէր են անուանում՝ դա ես չեմ ճանաչում  
և չեմ կամենում ճանաչել: Նա Աստուծու սէրն է միայն ճանա-  
չում և պահանջում է, որ իր կինը յանուն այդ սիրոյ՝ զոհաբե-

բուժեան նոյն պատրաստականութեամբ յափշտակուելի, ինչպէս ինքը՝ Նա պահանջում է կամքի ոյժ իր կնոջից— «չը կարեմալը ներելի է, իսկ չը կամեմալը— երբեք»։ հոգեկան ոյժ, ցանկութիւն— սա է Բրանդի կարծիքով ամենագլխաւորը, որովհետև ըով որ ներքուստ կուում է՝ նա կը յաղթէ»։ և Ազնէսը մինչև իր վերջին շունչը կուում է, նրա միակ որդին՝ փոքրիկ Ալֆը անկարող է դիմանալ հիւսիսային խիստ օդին։ բժիշկը բացարձակապէս յայտարարում է, որ միայն մեղմ կլիմայում նա կարող է ապրել՝ հակառակ դէպքում մահը մօտ է։ Ազնէսի մայրական սիրտը բուռն տենչանքով ձգտում է դէպի հարաւ. իսկ Բրանդի պահանջն է յանուն իր պարտականութեան՝ մնալ հիւսիսում. թշուառ մայրը հոգեկան ծանր մաքառումից յետոյ վճռում է մնալ և երեխան կարճ ժամանակից յետոյ մեռնում է։ Ազնէսն այժմ իր որդու յիշատակովն է ապրում, բայց խստասիրտ Բրանդը ոչ միայն տրամադիր չէ ամուսնի իր կնոջ վիշտը, այլ և կամենում է յիշատակի ամենաաննշան հեռքն անգամ ջնջել նրա հոգու խորքերում. նա թոյլ չէ տալիս Ազնէսին արտասուել, ծնունդի երեկոյեան իր մեռած որդու մասին մտածել։ Այդ դեռ բաւական չէ՝ երբ մի գնչուհի գալիս է հին շորեր խնդրելու՝ Ազնէսը դառն սրտով տալիս է Ալֆի շորերը, բայց նրա գլխարկը կրծքին սեղմած պահում է իբրև թանկագին յիշատակ— այն ժամանակ Բրանդն ստիպում է դրանից էլ հրաժարուել— «Ամեն ինչ կամ ոչինչ»... Ազնէսը այս կատարեալ զոհաբերութիւնից յետոյ այլևս կորցնում է իր դիմացկունութիւնը— նա էլ է զոհուում, որովհետև ըով որ Եհովային տեսաւ՝ նա կը մեռնի»։

Ահա անյողորդ իրէպիստը այժմ մենակ է մնացել և ամբողջովին անձնատուր է եղել իր վերանորոգչական միսիային։ «Ա՛խ, եթէ կարողանայի ձեզ վարդապետել, դէպի Աստուած բարձրացնել, թող սրտիս հիւթը ցամաքէր, երակներս արիւնաքամ լինէին»— այս հոգեբուղիս խօսքերն է ուղղում նա իր սոված ժողովրդին, որը սակայն նրան քարկոծել է կամենում, որովհետև հացի փոխարէն նա քար էր առաջարկում։

Բայց ինչո՞ւն է կայանում Բրանդի կրօնը՝ Նա խոստովանում է, որ դատարկ նորութիւնների յետից չէ ընկել և որ միև կողմից՝ եկեղեցու կանոններն ու վարդապետութիւնները պատշաճօրէն չէ կարող յարգել— «նրանք առաջ են եկել ժամանակի ընթացքում, ուրեմն և կարող են անհետանալ ժամանակի ընթացքում»։ Բայց բոլոր անցաւոր երևոյթների մէջ նա ճանաչում է միայն մի անանցանելի բան. դա ազատ ոգին է, որ կենսատու է յաւիտեանս. Նա անարգում է թմրած հոգիների և թմրած կարողութեան «Հայր մերը», որի միակ նպատակն է՝

առանց որ և է զոհաբերութեան արժանանալ երկնային շնորհքի։ Նա բացարձակապէս յայտնում է. «Ես պիէդիստ չեմ. չը գիտեմ մինչև իսկ արդօք ես քրիստոնեայ եմ... իմ Աստուածը այնպէս անգոյն չէ. իմ Աստուածը փոթորիկ է, իսկ ձերը՝ քամի. իմը անընկճելի, իսկ ձերը՝ տկար. իմը ամենասէր, իսկ ձերը մեղրու՝ «Ի՞նչ է ձեր եկեղեցին», հարցնում է նա մի այլ անգամ,—«խաբուսիկ մի երեւոյթ, երգեհոնի խաղ, երգեցողութիւն, դանգակներ—միայն գրաւիչ փայլ և շքեղութիւն»։ Այն ինչ Բրանդի հայեարքն ուղղուած է դէպի ապառաժների լարելորինթոսը. առասպելական ստոցային եկեղեցին է նրա տաճարը, ուր ամեն քայլափոխում քարոզում են ձևան հսկայական հիւսնները և ջրվէժները, ուր ապառաժների և ստոցակոյտերի միջից սուլում է կատաղի հողմը, ուր սրբազան բարձունքներում սաւառնում է բազէն»։

Այս եկեղեցին սիմբոլիկական է. և այս այլարտնակոն համառօտ նկարագրութեան մէջ արտափայլում է Բրանդի իդէալիզմի ամբողջ ոգին. նրա սառն և զրտաշունչ ընտարութիւնը իր հօտը դէպի նոր տաճարն առաջնորդելու՝ նա չէ հրամարւում՝ «Ամեն ինչ կամ ոչինչ» նշանաբանից. ընդհակառակն՝ պահանջում է ամբողջովին անձնատուր լինել նորին. իսկ երբ նկատում է հակառակ արամադրութիւն իր ժողովրդի մէջ՝ նորակառոյց տաճարի դռները փակում է և լանայլին մօտակայ գետն է ձգում։

Այնուամենայնիւ ժողովրդի մի մասը հետևում է նրան և բռնում է «ստոցային եկեղեցու» ճանապարհը. կոնայք և երեսաներ տղամարդկանց հետ միասին քայքայրոտ զառիվայրներով և ապառաժներով վեր են մագլցում դէպի անծանօթ տաճարը. Բայց ճանապարհին մէկը ազաղակում է—«Աստուսեցէք հայրս բոլորովին թուլացել է»։

Միւսը՝ «Երէկուանից ոչինչ չեմ կերել»։

Շատերը՝ «Ծարաւ եմք, քաղցած»։

Եւ մինչտե՞ս Բրանդը պատասխանում է—«չառանձ. ժամանակ չէ ուտելու մասին մտածել»—միւս կողմից մի կին մորմօքում է. «Երեսխաս հիւանդ է»։

Երկրորդը՝ «Ուտքս վիրաւորուած է»։

Երրորդը՝ «Գէթ մի կաթիլ ջուր»։

Իսկ մի տիրացու՝ բուն տիրացուական արամաբանութեամբ, կարծելով թէ այս տաժանելի չարբարանքից և զրկանքներից յետոյ Բրանդը մի հանդիսաւոր ճաշ է պատրաստելու իր հետեւորդների համար, հարցնում է՝ «Ի՞նչ է լինելու այս զոհաբերութեան վարձատրութիւնը»—«կամքի միութիւն, հաւատքի թոփշ»։

հողինների մաքրութիւնն» — պատասխանում է ոգևորուած առաջ-  
նորդը:

Այս հիասթափեցնող պատասխանից յետոյ ամբողջ կա-  
տաղի բարկութեամբ ազազակում է. — «մենք մոլորուած ենք,  
խարուած ենք... յաղթութեան փոխարէն նա մեզանից զոհ է  
պահանջում... Նա քրիստոնեայ չէ, նա խելագար է... վատ  
հայր, վատ որդի, վատ ամուսին... Հալածեցէք խոռվարարին,  
քարկոծեցէք նրան»: Եւ զայրացած ամբողջ Բրանդին քարի  
ստեղծաբան տարափով հալածելուց յետոյ՝ լեռնային բարձրութիւն-  
ներից նորից իջնում է դէպի հովիտը:

Վիրաւորուած, արիւնսաներկ Բրանդը կաղ ոտներով միայ-  
նակ թափառում է ամայի լեռներում և ահա յանկարծ լսում է  
խմբական մի ձայն.

«Յիմմր, երբէք նրան չես նմանի, որովհետև զու մարմ-  
նից ես առաջացել. հետեւս նրան թէ հեռանաս՝ կը մնաս միշտ  
նշտված»:

«Ո՛վ որդ, երբէք նրան չես հաւասարուի, որովհետև լեղի  
բաժակ ես դատարկել. հետեւես նրան թէ հեռանաս՝ գործդ  
կը մնայ միշտ խափանուած»:

«Յնորամբտ, երբէք նրան չես նմանի, ամեն ինչ զոհեցիր,  
բայց ոչինչ ձեռք չը բերիր. քո վարձատրութիւնը երկրաւոր է  
միայն»:

Եւ ահա փորձիչը կանայցի կերպարանքով երևում է նրան.  
Նա առաջարկում է Բրանդին երկրային ամեն տեսակ բարիք,  
նա խոստանում է վերակենդանացնել իր մօրը, կնոջը և զաւա-  
կին՝ միայն թէ հրաժարուի իր «Ամեն ինչ կամ ոչինչ» նշանա-  
բանից:

Բրանդը այս խօսքերի մէջ տեսնում է «աշխարհային ակ-  
կօրտի հնչիւնները», որի առաջ սակայն նա անդդուելի է մը-  
նում, գերադասում է ապրել «կարօտով եւ յոյսով»:

Վերջապէս նա մօտեցել է Svartetind-ին, սասոցային եկե-  
ղեցուն, բայց նա զգում է, որ դեռ կանգնած է ամենացած  
աստիճանի վրայ... «Հազար մղոն հեռու... Ա՛խ, ինչպէս կարօ-  
տում եմ ես Հարաւին, արևի ջերմ կառաղայթներին, սրտի  
հանդարտութեան, կեանքի բողբոջներին. ա՛խ, ինչպէս կարօ-  
տում եմ ես խաղաղութեան», և ահա մի ահազին ձեռն հիւս  
Բրանդին ցած է գահավիժում: Նա դառնալով դէպի երկինքը,  
այս վերջին խօսքերն է արտասանում — «Մահուան արհաւիրքի  
մէջ ասա՛ ինձ, Աստուած, փրկութեան համար բաւական չէ  
արդեօք ուժեղ կամքի quantum satis»: Մի ձայն իսկոյն վերև-  
ւից պատասխանում է. «Նա է Deus caritatis» — Նա, ողորմու-

թեան, սիրոյ Աստուածն ե. այսինքն այն Աստուածը, որին Բրանդը երբէք չը փնտոնեց, այն Աստուածը, որից մի փոքրիկ նշոյլն անգամ բաւական էր իր խտասարտութեան ստոյցը հալեցնելու:

Բրանդը ոչ միայն անյողողող, հետեողական իդէալիստ է, այլև մի խոշոր անհատականութիւն. դոկտօր Շտօկմանի պէս նա իր առանձնութեան մէջ ամենից ուժեղն է: Նա կամքի մի հերոս է, որ չէր ցանկանում իր պարտականութիւնը կիսովին կատարել, այլ ամբողջապէս, առանց մաղաչափ անգամ շեղուելու իր նպատակից: Այն ինչ դրամայի միւս դէմքերը սովորական անձնաւորութիւններ են, պաշտօնի մարդիկ: Այսպէս, օրինակ, մենք հանդիպում ենք անանուն բժիկի, կառավարչի, դիւղական ուսուցչի, տիրացուի, աւագ քահանայի եայնս: Սրանք բոլորն էլ իրանց միջակութեամբ և «յարմարուելու» թուլութեամբ Բրանդի ապառաժ կամքի հակապատկերներն են: Կառավարիչը նոյնպէս կատարում է իր պարտականութիւնը, բայց «ոչ իր սահմանից դուրս»: Մինչդեռ Բրանդի կարծիքով հաստատական մարդը՝ եթէ անգամ ծովերի հանդիպի՝ անշեղ կերպով պէտք է շարունակէ իր ճանապարհը—կառավարիչն ընդհակառակը մտածում է—եթէ մարդ կուուով ոչինչ չէ կարող ձեռք բերել՝ պէտք է տեղի տայ և հեռանայ: Նա այն կարծիքի է, որ «այժմ հինգ ձկնով անհնար է ահագին բազմութիւն կերակրել»: այն ինչ Բրանդի համոզմունքով այդ տեսակ անունդի համար տասը հազար ձուկն էլ անբաւարար է:

Միւս կողմից մինչդեռ բժիշկը մարդասիրութիւնից է խօսում՝ իբրև առաջին բարոյական պարտականութիւնից—Բրանդը մարդասէր (human) բառը համարում է մեղկութիւնը ծածկող մի զէնք, թզուկ հոգիները պաշտպանող մի վահան—ամբէ Աստուած մարդասէր էր՝ երբ Յիսուս Գրիստոսը խաչափայտի վրայ աւանդեց իր հոգին: Ա՛խ, ափսոս որ ձեր Աստուածը այն ժամանակ չէր տիրապետում, եթէ ոչ վերելից կ'աղաղակէր. «Շնորհք»: Թզուկ հոգիներից մէկն է նաև աւագ քահանան. նա այն կարծիքի է, որ եթէ Բրանդը լիտիջ է և իմաստուն՝ պէտք է լինի Պետրոսի, Յովհաննէսի, Կիրակոսի քահանան: Միջակութեան տրամաբանութեամբ՝ նա հաւատարութեան կողմնակիցն է և ոչ թէ ազատութեան: Նա դէմ է և՛ ուժեղ կամքին և՛ անհատականութեան—«ով որ հաւատում է մեծակ նպատակին համեմատում է կորած է: Ում որ Աստուած ոչնչացնել է կամենում՝ նրան դարձնում է անհաս, որպէս զի յետոյ նրան ծաղրի առարկայ դարձնի»: Այն ինչ Բրանդը պահանջում է—եղիբ, ինչ որ կամենում ես, մինչև իսկ ստրուկ քո կրքերին, եղիբ սակայն

ինքնաճանաչ: Կառավարիչը նոյնպէս աւագ քահանայի նման է մտածում—«Անհատը իզուր է միայնակ կուտում, Եւ մինչդեռ Բրանդը վրայ է բերում—«Լաւագոյները իմ դրօշակին են հետեւում»՝ կառավարիչը այսպէս թէ այնպէս շատ լաւ գիտէ իրան մխիթարել—«Մեծամասնութիւնը իմ ճանապարհովն է գնում»: «Մեծամասնութեան» կարծիքով, ով որ կամենում է յառաջ գնալ, պէտք է յարմարուի ժամանակին և տեղական պայմաններին. պէտք է անհարթութիւնից հեռու մնայ, տարբեր ճանապարհով չը գնայ, սեփական դատողութիւնը, անհատական ձգտումները պէտք է առանց այլևայլութեան զոհ բերէ պաշտօնին և դիրքին:

Այս է պատճառը, որ երբ այս սովորական տիպերը լսում են Բրանդի «հակաքրիստոնէական» քարոզը՝ սրանցից կառավարիչը ընտրող կերպով նկատում է. «այլևս ոչ մի չքանչան», իսկ աւագ քահանան՝ «եպիսկոպոսութեան հարցը քայտէ դարձաւ»: Եւ երբ ոգեւորուած ամբոխը Բրանդին է հետեւում՝ դէպի բարձր լեռը՝ այն ժամանակ նրանք խրատներ են կարդում «մոլորուած հօտի» հասցէին—«Մտածեցէք ձեր տան, արտերի և ագարակների մասին, անասունների, այծերի և ոչխարների մասին. լսեցէք՝ ձեր կանայքն ինչպէս աղաղակում են, ով պէտք է կերակրէ ձեր զաւակներին»: Աւագ քահանան որ զրկուելու էր բազմաթիւ ծխականներից և հարուստ եկամուտներից՝ Բրանդին հետեւող ամբոխին շատ տիպիկական կերպով անուանում է՝ «Օ՛, զաւակներս, ոչխարներս». «լսեցէք ձեր հովուի ձայնը», ասում է նա, «դարձէք դէպի ձեր հօտը, զղջման զգացմունքով լուսաւորէք ձեր աչքերը և շուտով ձեր հանգիստը կը գտնէք. ես գիտեմ, որ Աստուած բարի է, նա անմեղ արիւն չէ ուզում թափել: Օ՛, զաւակներս, ոչխարներս»: Եւ ոչխարական երակը բռնողները, միջակութեան ներկայացուցիչները պէտք է յաղթէին:

Շատերը Բրանդի բնաւորութեան նախատիպը համարում են նորվեգացի յայտնի պաստօր Լամմէրսին, որ «Բրանդին» լոյս տեսնելուց ուղիղ տասը տարի առաջ՝ չը նայելով իր փառաւոր պաշտօնին և նախանձելի դիրքին, ընտանեկան հոգսերով ծանրաբեռնուած և առանց որևէ նիւթական ապահովութեան—ինքնակամ թողնում է իր պաշտօնը և հիմնում առաքելական-քրիստոնէական մի համայնք: Գործնական իդէալիզմի այս արտասովոր փաստը գուցէ զգալի դրդումներ է տուել Իբսէնին, այնուամենայնիւ վերջինս նկատում է մի նամակում, որ «կրօնական տարրը «Բրանդին» մէջ մի պատահական երեւոյթ է» և որ մի քահանայի փոխարէն նա կարող էր մի արուեստագէտ

տի ընտրել իբրի հերոս, այնպէս ախարհն ախարհն ինչ որ տեղի ունեցաւ իր վերջին դրամայում—ԱՍՐԸ մենք մեռածներս սթափութիւնք»։ Իբսէն արանով ուղում է նկատել, որ զլրատորը ոչ թէ հերոսի աշխարհահայեացքի գոյնը, որպիսութիւնն է, այլ ընդհանրապէս դրամայի հիմնական գաղափարները—կամքի ոյժը, անհատականութիւնը և միւս կողմից իդէալի ու կեանքի մէջ եղած յարաբերութիւնը։

Այս վերջին պրօբլեմը, որ ինչպէս կը տեսնենք, զբաղեցրել է Իբսէնին իր յետագայ մի քանի դրամաներում, արծարծուած էր նաև շիւտսիսային զօրարշաւումն։

Իբսէնը մի կողմից որոշակի կերպով կանգ է առնում իդէալիզմի, այսպէս ասած, ողբերգական հուրեան վրայ, իսկ միւս կողմից անուղղակի կերպով մատնացոյց է անում թէ ինչպիսի պիտի պիտի կազմակերպուի առողջ իդէալիզմի տեմքը։ Չոր, խստասիրտ իդէալիզմը կեանքի, անձնական արջանկութեան բացասումն է—այս է ուսուցանում Բրանդի ճակատագիրը. բայց սա չէ նշանակում, որ Իբսէն առհասարակ դէմ է իդէալիզմին, որ նա ծայրայեղ անհատականութիւնը և իդէալիզմը դէմ առ դէմ է դնում և հակուելով դէպի առաջինը՝ վերջինը ժխտում է։ Կեանքի դործնական հայեցակէտից, յիշատի, գուցէ իւրաքանչիւր իդէալը ամփոխում է իր մէջ մի մեռելաշունչ տարր, բայց սրանից չի կարելի կորակացնել, որ իդէալը կեանքի բուրուականն է, նրա յաւիտենական ոտխոր, Բայի ամենօրեայ համոզեցութիւնն փաստերից՝ սրա ամենալաւ ապացոյցը հէնց «Բրանդի» վերջաբանն է՝ երբ նա զգում է սիրոյ Աստուծոյ նշանակութիւնը։ Մի դերմանացի քննադատ, Բ. Վէօրնէր, իղուր է այս վերջաբանը «հարկադրեալ վերջաբան» համարում։ Այս կարևոր վերջաբանով Իբսէն յայտարարում է իրան ամենաառողջ աշխարհահայեացքի՝ տեալ—իդէալիզմի կողմնակից։ Սա աւելի շօշափելի կերպով կ'երևայ Իբսէնի երկրորդ դրամայից—«Պէր Գիւնտ», որ նա գրեց Հռոմում։

## V

«Պէր Գիւնտը» նոյնպէս դրամատիկական բանաստեղծութիւն է, բայց մասամբ առասպելախառն։ Ինչպէս Բրանդը ծայրայեղ իդէալիզմի, այնպէս էլ Պէր Գիւնտը ծայրայեղ երեւակայութեան մարտիրոսն է։ Բայց այս երկու մարտիրոսների ընաւորութեան առանձնայատկութիւնների և ձգտումների մէջ կայ մի անագլին անդունդ։ Բրանդի ուժեղ կամքի և հզօր անհատականութեան փոխարէն՝ Պէր Գիւնտի մէջ մենք տեսնում

ենք կամքից և նպատակից զուրկ, մեղկ, քծնող ու եսական մի անձնաւորութիւն, որ միայն երևակայել և երազել գիտէ, մի արկածախնդիր, որ չունի սակայն դործնական ոչ մի եռանդ և որի հիմնական սկզբունքն է—եղիբ ինքնագոհ, արն միշտ այն, ինչ որ քեզ հաճելի է և յարմար:

Ինչպէս դրամայի ընթացքում տեղեկանում ենք՝ Պէրի հայրը հարբեցող է եղել, իսկ մայրը՝ Օսէն, թէև բնաւորութեամբ բարի, բայց այրմար, սահմանափակ խելքի տէր մի կին, որ կրթական ոչ մի ազդեցութիւն չէր կարող ունենալ իր հիւանդ որդու վրայ, մանաւանդ որ նրան շատ սիրելու պատճառով՝ մինչև իսկ երես էր տուել: Այնուամենայնիւ մայրը թէև անզիտակցաբար, բայց շատ յաջող կերպով է բնորոշում իր որդուն—ասնւտ ևս ասում, Պէր— սա է հէնց առաջին նախադասութիւնը, որով սկսում է դրաման. և պէտք է նկատել, որ Պէր Գիւնտի ամբողջ կեանքը ըստ էութեան՝ երեւակայութեան չափազանցութիւնից առաջացած կեղծիքի և ստութեան մի հիւսուածք է:

Նրա երեւակայութիւնն այնքան ծայրայեղ է, այնքան սանձարձակ, որ նա ամպի մի կտոր ձիու տեղ է դնում և նրա վրայ նոյնիսկ մի հեծեալ է նստայնում, մի հասարակ ծառ նա համարում է սպառազինուած մի ասպետ, ցնցոտիներով ծածկուած մի գեղջկուհու՝ իշխանուհի, իրան էլ՝ ի հարկէ, իշխան: Նա երազում է, որ իբրև հեծեալ ինքն էլ կարող է սահել կապուտակ օդի մէջ... բայց ես կարող եմ և աւելին: Նա երեւակայում է իրան իբրև մի ակառաղի դայձ, որ դառնալով դէպի իր նշանածը՝ Սօլվայգ՝ նկատում է—ե՛ս կը խածնեմ և կը ճանկըռտեմ քեզ, բայց ոչ թէ իբրև կատակ, ես կը ծծեմ սրտիդ արիւնը և միանգամայն կը լափեմ փոքրիկ քրոջդ կամ թէ ամբ արջ, որ զարդում, խորտակում, քարեր է փշրում, աղմկայոյզ ջրովէժը խլացնում, ծառը իր արմատով ժայռից դուրս պոկում:

Սակայն Պէր Գիւնտի fixe idée-ն, նրա երեւակայութեան ամենահիւանդոտ կողմն այն է, որ նա երազում է կայսր դառնալ և այդ ոչ միայն à la monaco, այլ և կայսր ամբողջ աշխարհի: Բայց նա իսկապէս կայսր է իր եսին, իր ողորմելի, ինքնագոհ, զիրան միշտ հաւատարիմ, բայց ինքնաճանաչութիւնից զուրկ շեփն: Այս ինքնապաշտութեան, նեղ եսակա՛նութեան առաջին ապացոյցներից մէկը հէնց այն վերաբերմունքն է, որ նա ցոյց է տալիս դէպի իր նշանածը՝ Սօլվայգ: Այս բարի, հեղահամբոյր աղջիկը սիրում է Պէրին իր ամբողջ սրտով. բայց վերջինս զաւաճանում է նրան—փախցնում է Ինգ-

րիզին, որը մի ուրիշի էր պատկանում և որին նա շուտով բաց է թողնում: Ապագայում, Արարիայի անապատներում նա նոյն զգայական հաճոյքների զոհ է դարձնում նաև բեղուխնուհի Անիտրային:

Մօր մահուանից յետոյ Պէր Գիւնտը հեռանում է Նորվեգիայից և օտար երկրներն ընկած՝ բախտ է որոնում: Նա դանազան աններելի, ստոր միջոցներով մեծ հարստութիւն է դիզում. յունական ապստամբութեան ժամանակ մտածում է մինչև իսկ մի խոշոր փոխառութեամբ օգնել թիւրքաց սուլթանին և այս նպատակով մի նաւ թանկագին դանձերով բեռնաւորած Վոսիտորի ափերն է ուղարկում, բայց ճանապարհին մի անգլիացի, գերմանացի, ֆրանսիացի և չվէդացի խորամանկ հնարագիտութեամբ կողոպտում են նրա ամբողջ հարստութիւնը—այս կողոպուտը, ինչպէս յետոյ կը տեսնենք, սիմբոլիկական մի միջադէպ է:

Այս դժբախտութիւնից յետոյ Պէր Գիւնտը Աֆրիկայի անապատներն ընկած արկածալի կեանք է վարում. նա մտածում է այս չոր և աւազոտ տարածութիւնները ջրառատ օլադիմներ ընկնելու ծովերի վերածել, Արարիայում նա հանդիպում է մի անակընկալ բախտի—նրան ընդունում են իբրև երկնառաք մի մարգարէ, բայց նա անընդունակ է լինում իր մարգարէական արժանաւորութիւնը երկար պահպանել: Արարիայից նա անցնում է դէպի Նիլոստոս Գահիրէում նա մտածում է գիտնական դառնալ և հնագիտութեամբ պարապել: Երբ նա կանգնած է անխօս սֆինքսի առաջ, յանկարծ լսում է գերմաներէն լեզուով մի հարց—«ձխ, սֆինքս, ո՞վ ես դու»: և ահա անմիջապէս սֆինքսի յետևից դուրս է գալիս հարց տուող պարոնը—պրօֆէսոր Բէգրիֆէնֆէլդ, որ Գահիրէի խելագարատան վերատեսուչն էր և ինքն էլ հոգեպէս հիւանդացած լինելով՝ այժմ պտոյտ էր դործում սֆինքսի շուրջը. տեսնելով Պէր Գիւնտին՝ նա հարցնում է—ներողութիւն պարոն, թոյլ կը տաք հարցնել ինչն է ձեզ առաջնորդել այստեղ:

—Այցելելու այս բարեկամիս—պատասխանում է Գիւնտը:

—Սֆինքսիս:

—Այո, հին օրերի բարեկամիս:

—Հիանալի... ուրեմն ճանաչում էք նրան. կարո՞ղ էք տալ ցանկալի լուծումը. ունէ՞ք այդ կարողութիւնը:

—Ձէք տեսնում ինչպէս նա հեգնօրէն ծիծաղում է. նա է հեկեց ինքր:

Պէր Գիւնտի այս պատասխանը միանգամայն յալիչտակում է Բէգրիֆէնֆէլդին. նա այդ համարում է «խորիմաստ, առեղ-

ծուածային»։ նա Պէր Գիւնտին անուանում է անձանօթը, դաւլիքը, վաղուց յայտնուածը։ Իսկ նոր իմաստութեան հեղինակը մի կողմից շուարած, իսկ միւս կողմից չափազանց ինքնաբաւական կերպով նկատում է—«բոկապէս ճանաչուած եմ»։ Խելադար պրօֆէսորի կարծիքով «նա է հէնց ինքնի» հեղինակը, «մտածողութեան կայսրն է»։

Բէզրիֆէնֆէլդը Պէր Գիւնտին առաջնորդում է դէպի խելագարատուն. այստեղ նա յայտարարում է խելօքներին՝ յիմար, իսկ յիմարներին՝ խելօք և «խելօքները» հաւաքուած՝ բունն սգևորութեամբ «ամենախելօքին» ընտրում են կայսր։

Այս նորագիւտ կայսրութեան մէջ Պէր Գիւնտը չէ կարող երկար համբերել. նա հետզհետէ համոզւում է թէ՛ ինչ էր իր վնտրած կայսրութիւնը։ Հիասթափուած նա վերջ է տալիս իր արկածալի բախտախնդրութեան և նորից վերադառնում Նորվէգիա։

Հայրենիքում երկարատև ու անձանձիր համբերութեամբ նրան էր սպասում հաւատարիմ Սօլվայգը, որ արդէն բաւական պառաւել էր. տեսնելով այս վերջինին իր խաղաղ ընտանեկան յարկում՝ Պէր Գիւնտը ուշքի եկած աղաղակում է. «այս օճիկ եր իմ կայսրութիւնը»։ Երբ մահուան ուրուականը երևում է նրան և հաշիւ է ուզում տեսնել՝ այն ժամանակ նա սարսափած՝ Սօլվայգի օգնութեանն է ապաւինում և նրա զրկումն էլ աւանդում է իր հոգին։

Բայց Պէր Գիւնտը իր «մահուանից օտս առաջ աւոզէն մեռած եր»—այս է իր սեփական դատավճիռը, որ ինչքան անողոր է, նոյնքան ճշմարիտ։ Անսանձ երևակայութեամբ և ցնորամիտ երազանքներով պաշարուած՝ նա չը ճանաչեց երբէք ոչ ինքն իրան և ոչ իրական կեանքը. իր բուն կայսրութիւնը թողած՝ նա կամենում էր ցէղար դառնալ, և ահա խելագարատան մի անկիւնում, մարգկային թշուառութեան այս սրտաճմրկ միջավայրում է միայն դաաստանում. բայց արդէն ուշ էր՝ երիտասարդութիւնն արդէն թառամել և ծերութեան ալիքն էր նրան պաշարել։ Այս է պատճառը որ ստուերախիտ անտառում բնութեան անշունչ առարկաներն անգամ՝ խոտածաղիկը, չորացած տերևները, վաղորդեան ցօղը, օդային հնչիւնները, ծառերի սօսափիւնը՝ լեզու առած բողբոլում, դատապարտում են նրան. և անտառում սխտոր հաւաքելիս՝ ինքնաճանաչ խոստովանութեամբ ինքն էլ է իրան դատապարտում. «ողորմելի արարած, դու կայսր չես, այլ մի սխտոր»։ Մի այլ անգամ՝ Նորվէգիա վերադառնալիս՝ Պէր Գիւնտը նաւապետի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ ահա թէ ինչ է խոստովանում—«Ոսկու յետե-

ւից ընկայ՝ կորցրի ինչ որ գտայ. ճակատագրի աստուածունուն միշտ անծանօթ մնացի և այն չնչին բանը, որ ազատել և հետա եմ տանում, դա մնացորդն է այն բոլորի, ինչ որ սատանայի բաժին դարձաւ:

Բրանդի և Պէր Գիւնտի մաքաիրօտութեան մէջ կղած տարբերութիւնը, կարծում ենք, այժմ բաւականաչափ պարզուած է. Մէկը իդէալի զոհն է, իսկ միւսը իր ողորմելի շեքն: Պէր Գիւնտի ամենամեծ դժբախտութիւնը կայանում էր նրանում, որ նա զուրկ էր ինքնաճանաչութիւնից. այն ինչ Բրանդը իր ծայրայեղութիւնների և բացասական յատկութիւնների հետ միասին գտնէ այն խոշոր առաւելութիւնն ունէր, որ ինքնաճանաչ էր. բայց միատամանակ՝ կամքով ազատ և ուժեղ, հոգեկան կարողութեամբ, դիմացկանութեամբ մի հսկայ, որ աներկիրը համարձակութեամբ և բաց ճակատով էր հանդիպում ամեն մի զրկանքի և թշուառութեան և երբեմն նոյնիսկ ինքն էր դառնում այս զրկանքի և թշուառութեան ազդիւրդ: Այն ինչ Պէր Գիւնտը թոյլ է, մեղկ, վախկոտ. նա իսկապէս ոչ թէ գիտակցաբար, զղջումով, այլ միայն իր շեքն երկիրդիցն է հրաժարում իր երազներից. կեանքի արհաւիրքների առաջ նա ոչ թէ մի բաց, անվեհեր ճակատ է ցոյց տալիս, այլ իր անկարող մէջքը... որ ձգտում է շարունակ արհաւիրքից առաջ սլանալ: Այս տեսակէտից մենք միանգամայն համաձայն ենք այն սիրուն համեմատութեան հետ, որ անում է Ռ. Վեօրնէր այս երկու հերոսների նկատմամբ—«թէ Բրանդը և թէ Պէրը կամքի տէր են, բայց այն տարբերութեամբ, որ առաջինը շատրունի բարձրացայտ ջրի սիւնն է ներկայացնում, որ քամու զօրեղ հոսանքի տակ ցրւում, քայքայւում է, բայց դարձեալ դէպի վեր է ցայտում—այն ինչ Պէրը հովտում հոսող առուակի է նմանում՝ առանց բարձրացայտ թռիչքների»:

Պէր Գիւնտը ոչ միայն մասնաւորապէս թոյլ ընաւորութեան և անտանձ երեակայութեան մարմնացումն է, այլ և ըստ հեղինակի խոստովանութեան՝ ընդհանրապէս նորվեգական ազգի պատկերն է ներկայացնում. այն, ինչ որ Համլէտն է գերմանական ցեղի համար, նոյնն է և Պէր Գիւնտը նորվեգական ազգի վերաբերմամբ: Իրական թէև մութ, քողարկուած, բայց սրամիտ այլաբանութեամբ ծաղրում է իր հայրենակիցների ընաւորութեան թուլութիւնը, ետականութիւնը, միւս կողմից՝ ցնորամիտ քաղաքականութիւնը—որոնք բէալիստական XIX դարում փոխանակ ողջամիտ և գործնական սկզբունքների հետեւելու՝ բոմանտիկական ձգտումներով են ոգեւորւում: Monsieur Ballon-ի հետ խօսելիս Պէր Գիւնտը անա թէ ինչ է նկատում—«եսեակա-

նուրիւնն ինձ համակել է և իմ ամբողջ էութիւնը զուսուրեղ-բայց և այնպէս դա իմ ազատ ընտրութիւնը չէ—նախահայրե-րբցս եմ ժառանգել: Նրբամիտ ֆրանսիացին իսկոյն վրայ է բերում:

—Դուք նորվէզացի էք:

—Այո, ծնունդով, բայց կոչումով աշխարհաքաղաքացի—պատասխանում է Պէր Գիւնտը:

Իսկ վերջինիս «աշխարհաքաղաքացի» լինելը կայանում է նրանում, որ նա փող վատակելու շնորհքը ձեռք է բերել Ամերիկայից, «լիառատ գրքակալները՝ Գերմանիայից, շոտլանդացիներ, սրբաօսութիւն, esprit և ցինիզմ»՝ Ֆրանսիայից, «աշխատելու ընդունակութիւնը և մի քիչ էգօրիզմ»՝ Անգլիայից, «համբերողութիւնը» հրէաներից, «մի քիչ էլ dolce far niente»՝ Իտալիայից, իսկ իր արեան երկաթը առատացնելու համար՝ Շվեդիայից ձեռք է բերել պողպատ, որովհետև սա «ամբաջնում է կարողութիւնը»:

Իբէն կծու և անխնայ կերպով հեգնում է նաև իր հայրենակիցներին շովինիզմը, նեղ ազգասիրական հակումները. մերկացնում է այն անձնապատան ոգին, այն ըմբոստ ինքնաբաւականութիւնը, որ արտաքուստ ինչքան փայլուն է և յիսորտացող, ներքուստ նոյնքան դատարկ է, անբովանդակ, առողջ կենսունակութիւնից զուրկ և որը, ինչպէս յայտնի է, առաւելապէս փոքրիկ ազգերի յատկանիշն է կազմում: Այսպիսի առանձնայատկութիւններով օժտուած մի ժողովուրդ, բնական այս վայրագ դարում սէտք է ընկճուի, կուլ գնայ: Այս հեռանկարը նա խորիմաստ կերպով մատնանիչ է անում Պէր Գիւնտի հարստութիւնը կողոպտել տալով. իսկ կողոպտողներն են՝ մի անգլիացի, գերմանացի, ֆրանսիացի և շվեդացի:

«Պէր Գիւնտը», ըստ Իբէնի դիտողութեան, նորվէզական բնաւորութեան հայելին է. այստեղ արտափայլում է իր հայրենակիցների դէմքը, էութիւնը. իսկ «Բրանդի» մէջ հեղինակը ձգտում էր, եթէ ոչ ամբողջովին՝ գէթ մասամբ, ցոյց տալ թէ ինչպէս պեճեք լինեն նրանք: Սակայն Իբէն ինչպէս միշտ, այնպէս էլ այս երկու դրամաներում աւելի շուտ ժխտող, բացասող, քայքայող է՝ քան թէ առաջնորդող, ստեղծող, վերանորոգող: Առեղծուածների ամենաբարդ հանգոյցների առաջ նա ընդունակ է անզուգական նկարագրութեամբ և հանճարեղ վերլուծումով դրադուել, այն ինչ փրկարար վճիռներ նա հազուադէպ դէպքերումն է միայն արձակում:

Այս առասպելախառն դրամայից յետոյ Իբէն 1869-ին, Սաք-

սօնիայի մայրաքաղաքում, գրեց իր երկրորդ յայտնի կատակերգութիւնը—«Միսասարդուրեան միութիւնը» («De Unges Fortband»), որի նիւթը ժամանակակից ընաւորութիւն էր կրում իրանի սիմբոլիկական ոճը այստեղ փոխուում էր քաղաքի, այլաբանութիւնը՝ իրական նկարագրութեան:

Երիտասարդ փաստաբան Շտայնհօֆ մի փաստեր և փայլուն զիրք սիրող անձնաւորութիւն է. նրա նպատակն է մի օր ասարլամէնտի անդամ կամ միւստր դատնալ և մի անուանի ու հարուստ աղջկայ հետ ամուսնանալ: Ահա մօտ երկու ամիս է, որ նա հաստատուել է հարաւային Նորվեյիայի առեւտրական քաղաքներից մէկում: Այստեղ նա շուտով աչքի է ընկնում իբրև ատօնային ճառախօս: Քաղաքի յայտնի կալուածատէր հրէայ Մօնզէնի կարծիքով՝ Շտայնհօֆն ունի ոչ միայն խօսելու ընդունակութիւն, այլև ճշտարակական բարեկեցութեան համար բարախող մի սիրտ: Թէ Մօնզէնի այս կարծիքը որքան ճիշտ է՝ սա շուտով կ'երեւայ: Սակայն բանը նրանումն է, որ հրէայ կալուածատէրը նորեկ փաստաբանին լաւ ընդունելութիւն է ցոյց տալիս՝ մանաւանդ որ նա ազատամիտ էր և առհասարակ դէպի երիտասարդ կուսակցութիւնն էր հակուած. այն ինչ քաղաքի միւս ազգեցիկ անձնաւորութիւնը՝ սենեկապետ և գործարանատէր Մալբէրգ պահպանողական է և իր զիրքով Մօնզէնից ուժեղ Շտայնհօֆ՝ Մալբէրգի հովանաւորութիւնը վաստակելու համար՝ երկու անգամ այցելութեան է գնում նրա մօտ, բայց չէ ընդունւում: Այս անպատուութեան համար ատօնային ճառախօսը՝ վճռում է սնպատճառ վրէժխնդիր լինել Մալբէրգից: Եւ առիթը շուտով է ներկայանում:

Մայիսի տասնհինգօրն է՝ նորվեգական սահմանադրութեան տարեդարձի օրը. ժողովրդի խուռն բազմութիւն հաւաքուած՝ պատգամաւոր և կապալառու Դրանսֆէլդի ղեկավարութեամբ տօնում է այդ օրը և ի միջի այլոց ոգևորուած ցոյցեր է անում ատեղական թագաւորին՝ Մալբէրգին: Շտայնհօֆ, որ վաղուց խօսք էր խնդրել, իսկոյն մէջ է ընկնում սպառնալով՝ «այս սենեկապետը թող ինձ այժմ ճանաչի» և սկսում է մի որոտալից ճառ:

—Լսեցէք ինձ, ազատութեան այս հանդիսաւոր օրով ոգևորուող եղբայրներ... Ես մի օտարական եմ ձեր շրջանում, բայց երգում եմ՝ ամբողջ սրտովս մասնակից եմ ձեր ուրախութեան և արտամութեան, ձեր կռուին և յաղթանակին: Եթէ ևս ոյժ ունենայի...

—Ոյժը ձեր ձեռին է, պարոն փաստաբան—նկատում է սպարանատէր Բօլման:

—Ոչ մի ընդհատում. խօսքը ձեզ չէ պատկանում—վրայ է բերում հանդէսի նախագահ Դրանսֆելդ:

—Իսկ ձեզ աւելի քիչ է պատկանում, նկատում է ճառախօսը: Հանդէսի մասնատողովը, շարունակում է նա, ես համարում եմ գոյութիւնից զուրկ և ազատութեան օրը ազատութիւն եմ յայտարարում (երիտասարդ ունկնդիրները աղաղակում են՝ կեցցէ ազատութիւն): Կամենում են խօսքի ազատութիւնը սահմանափակել, լսում էք, կամենում են ձեր բերանը փակել: Հեռու այսպիսի բռնակալութիւն. մի լեզուակապ ամբոխի առջ ևս չեմ կամենում խօսել. ևս ուզում եմ ազատ, համարձակ խօսել. և դուք էլ պէտք է այդպէս վարուէք (ժողովուրդը ոչնորուած ազաղակում է՝ կեցցէ): Այս դատարկ, անպտուղ տօնակատարութիւններին պէտք է վերջ տալ. մեր մայրսեան հանդէսից պէտք է այսուհետև մի կենդանի և սուկեղէն պտուղ արգասաւորուի: Մայիս. չէ որ սա բողոքչկու ժամանակաշրջանն է, տարուայ թարմ և կենսատու ամիսը... Ժողովրդի մէջ ես լաւ յատկութիւնների հանդիպեցի, բայց տեսայ նաև ապականութեան ոգին, որ հետզհետէ կապարտնում և ճնշում է նրան: Այո՛, ես հանդիպեցի երիտասարդ, ջերմ և վստահելի սրտերի, բայց միաժամանակ և այնպիսիների, որոնք իրանց դռները փակեցին (սենեկապետի աղջիկը՝ Ազնես—«Աստուած իմ». սենեկապետ Մարքեդ—«Ի՛նչ է ուզում դրանով ասել»): Այո՛, եղբայրներ, այստեղ գոյութիւն ունի մի ոյժ, օղահար օրերից մնացած մի ուրուական, որ լոյսի և շարժման փոխարէն՝ ընդարմացած խաւար է միայն սփռում. թող դեռին մանի այս ուրուականը (ժողովուրդն աղաղակում է— կեցցէ, կեցցէ) ... Եթէ մի ուրիշը չէ կամենում վիշապին բնաջինջ անել, այն ժամանակ ևս կ'անեմ: Բայց մենք պէտք է միանանք... մեզ երիտասաղներին է պատկանում ժամանակը, սուկայն մենք էլ ժամանակին ենք պատկանում: Մեր իրաւունքը մեր պարտականութիւնն է. ասպարէզ գործունէութեան համար, ասպարէզ ամեն մի ուժեղ կամքի համար: Լսեցէք, հիմնե՛ք մի միութիւն. փողի տոպրակը դադարել է այստեղ իշխելուց...հէնց այս բոպէին հիմնե՛ք միութիւն, երիտասարդութեան միութիւն...»: Ամբոխը մեծադորդ կեցցէներով ձայնակցում է օրուայ հերոսին և ձեռների վրայ բարձրացրած՝ առաջնորդում է դէպի մօտակայ դահլիճը «երիտասարդութեան միութիւնը» դուխ բերելու:

Անկասկած է, Շտայնհօֆի շանթալից խօսքերը սենեկապետ Մարքեդի դէմն էին ուղղուած. բայց վերջինս մի տարօրինակ թիւրիմացութեամբ չէ հասկանում այս իրօղութիւնը և

ճառախօսի յարձակումները իր հակառակորդ Մօնղէնի հասցէին է ընդունում: Եւ ահա ճառախօսը հետևեալ օրը հրաւէր է ստանում սենեկապետին այցելելու Շտայնհօֆ, առանց տատանուելու, ընդունում է խաւարածին ռուրականին՝ հրաւէրը: Նա, որ մի օր առաջ Մօնղէնով էր ոգևորուած՝ այժմ ցննիկական կերպարանափոխութեամբ՝ ահա թէ ինչ է նկատում—«երբ ես Մօնղէնի հարստութիւնն եմ երևակայում, այն ժամանակ դա թոււմ է ինձ զանազան կեղտոտ ապահովագրերի և բանկային հաստ թղթերի մի ծրար: Այն ինչ այստեղ (խօսքը Մալբերգի հարստութեան մասին է), այստեղ դա մի մետաղ է, փայլուն արծաթ. և մարդը հէնց ինքն էլ է այդպէս: Յիրաւի, ինչ հրաշալի ծերուկ է այս սենեկապետը»:

Բայց սենակապետը երբ տեղեկանում է թէ բանն ինչու՞ն է—որ ճառը ոչ թէ իր հակառակորդի, այլ հէնց իր դէմն է ուղղուած—այն ժամանակ երեսը շուռ է տալիս Շտայնհօֆից: Վերջինս ինչպէս լպիրշ ցինիզմով տատանուում, քամէլէ՛ծի նման փոփոխուում է Մալբերգի և Մօնղէնի վերաբերութեամբ, այնպէս էլ տատանուում է առաջինի աղջկայ՝ Ագնէսի և երկրորդի՝ Հէրթայի նկատմամբ, չը գիտէ ո՞ւմ ընտրէ հարսնացու, մէկին թէ միւսին: Շտայնհօֆ 117 ձայնով արդէն պատգամաւոր է ընտրուած, բայց իր ընտրութիւնն օրինական դարձնելու համար նա պէտք է անշարժ կալուած ունենայ. իսկ սա հնարաւոր էր միայն հարստութեամբ կամ ուրիշ խօսքով՝ այս դէպքում միայն հարուստ աղջկայ հետ ամուսնանալով: Նորընտիր պատգամաւորի հարսնացուներն էին՝ Ագնէսը և Հէրթան, որոնք Շտայնհօֆին ճանաչելուց յետոյ ձեռքն թափ են լինում նրանից և ուրիշների հետ են նշանուում: Շտայնհօֆ յուսահատուած՝ վճռում է մինչև իսկ ճիւղաճանցատիրուհի, այրի Բունդհայմի հետ շարտի և գլխի դաշն կապել: Բայց մի անակնկալ թիւրիմացութեամբ սա էլ է ձեռքից թռչում:

Ոստատակութեան և անարգանքի տիզմի մէջ թաթախուած՝ Շտայնհօֆին մնում էր միայն հեռանալ քաղաքից: «Սոսկալարար»—աղաղակում է սենեկապետը նրա յետևից, Նա ուրախ է, որ այժմ վերջապէս օդը մաքրուեց, փառք Աստուծոյ... քամի բարձրացնող Շտայնհօֆից բոլորովին աղատուեցինք»:

Շատ ճիշտ է նկատում Գէորդ Բրանդէս, որ շտայնի ճառախօսը՝ Ֆրագնների դարաշրջանում դառնում է «Ֆրագաբանների թագաւոր»: Ինչպէս տեսանք Ֆրագնների շնորհիւ էր, որ նա ելեգորականացրեց մի ահագին ամբօխ, գրաւեց, յափըշտակեց դիւրաբարձը երիտասարդների մի ամբողջ խումբ: Շտայնհօֆ անշուշտ ուժեղ էր և իր հերոսական սիրազործու-

Թիւնները շրջանում եղան վայրկեաններ՝ երբ նա իր շրջապատողներին ամենակարողն էր, երբ նրա բոլոր հակառակորդներն անզոր էին նրա դէմ: Բայց սա շատ վաղանցուկ էր. նա իր փոփոխական, անհաստատ բնաւորութեամբ շուտով կորցնում է իր դիրքը: Դոկտոր Ֆէլդէր շատ լաւ է ընտրուում նրան—էնքան մի թափթփուկ է, հատ ու կտորտանք: Եւ ճանաչում եմ նրան երևեսայութիւնից. տանը կօպիտ էր, դպրոցում՝ իդէալական ձգտումներով ոգեւորուող. միտքը, բնաւորութիւնը, կամքը—ամեն ինչ տարբեր ուղղութեամբ: Այս բոլորի հետեւանքը ինչ պէտք է լինէր, եթէ ոչ նրա ամբողջ անհատականութեան պատակտումը: Բայց Շտայնհօֆ ոչ միայն փոփոխական է, այլ և ստոր, անպատկառ. նրա օպորտիւնիզմը ոչ մի անկարելիութիւն չէ ճանաչում: Ոմանք Շտայնհօֆի մէջ տեսնում են բնաւորութեան ինչ որ միամիտ, պարզասիրտ մի գիծ. բայց սա այն տեսակ պարզասրտութիւն է, որի իսկական անունն է՝ ցիմիգմ: Ինչպէս նա երեկուայ ռուբուականին՝ այսօր Վերալի մարդ է դարձնում, այնպէս էլ երեկուայ բարեկամին՝ Մօնզէնին այսօր համարում է «փողատոպրակ», «օձ», «ստորաքարչ որդ» և այլն. երէկ Մալբէրգը խաւարի և մթութեան ոգին էր, իսկ այսօր Շտայնհօֆը նրա ընտանեկան շրջանում իրան այնքան քախտաւոր է դառնում, որ կարծես «գարնանային անձրևով զովանալիս լինի»: Երբ Մալբէրգից նրա աղջկայ ձեռքն է խնդրում և չէ ստանում՝ նա նոյն պարզասրտութեամբ սպառնում է—«եթէ չը տաք, ձեզ կը խայտառակեմ թերթերում»:

Յարմարուելիւ ընդունակութեամբ, փոփոխականութեամբ, բնաւորութեան ստորութեամբ, մի խօսքով լպիրշ ցինիզմով Շտայնհօֆին նման է նաև տպարանատէր և քաղաքական թերթի հրատարակիչ Բօլման, որ շարունակ «տեղական պայմաններէ» է խօսում: Այս «տեղական պայմաններին» հմուտ կերպով վարժուած նա գնում է շարունակ այն հոսանքով, որտեղից քամին է փչում, շապկի նման փոխում է իր թերթի ուղղութիւնը, որովհետև այս թերթը իր «միակ կողմն է»: Երբ նա գալիս է Շտայնհօֆի մօտ իր թերթի համար «Երիտասարդութեան միութեան» մասին խոստացուած յօդուածը խնդրելու և նկատում է, որ երեկուայ ճոռախօսը այսօր ուրիշ արամաղորդութեան է, որովհետև «զործը ուրիշ ընթացք է ստացել»—վախկոտ աղաչանքով դանդաատում է—«պարիս փաստաբան, գիւղէք որ իմ ունեցած չոր հացի կտորը ձեռքիցս խլում էք»: Այնուհետև նա անամթ պարզասրտութեամբ շարունակում է—«ձմեռը, քանի որ դուք չէիք եկել, թերթիս գործերը լաւ էին գնում: Եւ ունէի մի յայտնի սկզբունք և հետեւում էի նրան»:

ես մտածում էի—մեծ հասարակութիւնն է, որ պահպանում է թերթը, բայց մեծ հասարակութիւնը վատ հասարակութիւնն է և վատ հասարակութիւնը կամենում է մի վատ թերթ ունենալ. և այս սկզբունքի համեմատ էլ կառավարում էի թերթը: Ամեն ինչ կարգին ընթացք էր ստացել. սակայն յանկարծ դուք ևրևան ևկաք ու նոր դադարներ երբիք մեր կողմերը և որովհետեւ իմ թերթն էլ նոր դոյն ստացաւ՝ այդ պատճառով Դրանաֆէլդի բարեկամներին կորցրի, իսկ նրանք, որոնք այժմ մնացել են՝ վատ են վճարում:—«Սակայն թերթը լաւացաւ»—վրայ է բերում Շտայնհօֆ. «Լաւ քերթով ես չեմ կարող ապրել»—պատասխանում է ցինիկ դազէթալին: Շտայնհօֆի հրաւիրուելը սենեկապետի մօտ՝ նա բացատրում է վերջինիս վախկոտութեամբ և խորհուրդ է տալիս փաստաբանին «օգտուել այս վախկոտութիւնից»—Եթէ նա երկիւղ է կրում այն բանից, ինչ որ դուք էք կամենում անել, այն ժամանակ նա անշուշտ կը վախենայ նաև այն բանից, ինչ որ ես տպել եմ ուղում. սրանից էլ ես կ'օգտուեմ:

Կատակերգութեան միւս դէմքերից ուշադրութեան արժանի է Մալսբերգի հարսը՝ Սէլման, որ նախկին դերասանուհի էր. բայց ամուսնանալով սենեկապետի որդու՝ Էրիխի հետ՝ դառնում է մի «տիկնիկ»: Սակայն ինքնուրոյնութեան և կանացի անհատականութեան երակը դեռ շարժուն էր նրա մէջ. նկատելով իր ամուսնու ստոր արարքները՝ նա սպառնում է բաժանուել նրանից՝ գերադասելով «փողոցում խաղալով և երգելով ապրել»: Իր այս առանձնայատկութեամբ Սէլման որոշ չափով նօրային է յիշեցնում: Հետաքրքիր են նաև դօկտօր Ֆէլդէր և Դանիէլ Հայրէ, առանձնապէս կալուածատէր Մօնդէն, ոսկէ հորթի այս իսկական ևրկրպագուն, որ խարդախութեամբ և ճարպիկ մեքենայութիւններով ազատում է մանկութիւնից և հարիւր հազարներ գիգում:

«Որոյ կատակերգութեան» մէջ, ինչպէս տեսանք, Իբսէն հասարակական կեանքի զանազան բացասական դէպքերի ծընունդը, անուղղակի կերպով, շրջապատող հանգամանքներով էր պայմանաւորում՝ սօցիալական անտեսական դրութեամբ «Երիտասարդութեան միութեան» մէջ նա դարձեալ իր մատը այս հեռաւոր և կենտրոնական արմատի վրայ է դնում. բայց ներկայ դէպքում առանձնապէս կանգ է առնում քաղաքական կուսակցութիւնների վրայ, «Քաղաքականութիւնը մի անմաքուր արուեստ է»—նկատում է նա մի տեղ. իսկ այս վերջին կատակերգութեան մէջ նա չէ զլանում անխնայ կերպով քօղազուրկ անել այս «անմաքուր արուեստի» երեսը՝ նա մտրակում է այժմ

և ձախ, թէ պահպանողականներին և թէ ազատամիտներին, բայց այն տարբերութեամբ, որ վերջիններին աւելի խիստ կերպով է հարուածում: Այս հանգամանքն էր պատճառը, որ «Յրիտասարդութեան միութիւնը» ժամանակին մեծ ազմուկ հանեց Նորվեգիայի ազատամիտ շրջաններում: Կեղինակը մասուլի կողմից կծու յարձակումների ենթարկուեց. լուրջ ընդհարումներ ունեցաւ մինչև իսկ Բեօրնսօնի հետ, որի ազդիւր ամուսնացած էր իր միակ որդի Զիգուրդի հետ: Բայց այս ընդդիմադրութիւնը և նեղսիրտ յարձակումները ժամանակաւոր էին. 1891 թուին՝ երբ Իբսէն վերջնականապէս վերադարձաւ Նորվեգիա՝ Գրիստիանիայում նրա ներկայութեամբ տեղի ունեցաւ «Յրիտասարդութեան միութեան» հարիւրերորդ ներկայացումը: Հեղինակը այս առիթով ոգևորուած ցոյցերի անարկայ դարձաւ:

## VI

1873-ին լոյս տեսաւ Իբսէնի նշանաւոր դրամաներից մէկը—«Կայսր եւ Գալիլիացիներ» («Kaiser og Galilaeer»), որ իր ծաւալի խոշորութեամբ և հեղինակի ամենամեծ աշխատութիւնն է՝ բաղկացած է երկու մասից և տասը գործողութիւնից:

Այս մեծածաւալ դրամայի գլխաւոր հերոսը հռոմէական կայսր Յուլիանոս ուրայոզն է, որի նկատմամբ Իբսէն թէև ընդհանրապէս հաւատարիմ է մնում պատմութեանը, այնուամենայնիւ երբեմնակի թոյլ է տալիս իրան, եթէ չասենք բըռնազբօսիկ, գոնէ ազատ վերաբերմունք: Ընտրելով Յուլիանոսի նման մի դէմք իբրև նիւթ՝ հեղինակը նորից լայն ասպարէզ է գտնում իր սիրած պրօբլէմները—մի կողմից ազատութեան և անհրաժեշտութեան, անհատի և միջավայրի, միւս կողմից քրիստոնէութեան և հեթանոսութեան մէջ եղած յարաբերութիւնը—լուրջ և նրբամիտ խորհրդածութեան ենթարկելու:

Յուլիանոսը մատաղ հասակից սկսած բարեպաշտ քրիստոնէական ոգով էր սնուած. Կապադովկիայում իսկական վանական կրթութիւն էր ձեռք բերել, այնպէս որ նոյն իսկ զեռահաս տարիքում նա ազատել էր իր ընկեր Ագաթօնին «հեթանոսութեան խաւարից և առաջնորդել դէպի քրիստոնէական լոյսը»: Իբրև բարեպաշտ քրիստոնեայ՝ նա յայտնի իմաստասէր ճարտասան Լիբիանոսին համարում էր Գալիլիացու թշնամիներից «ամենավտանգաւորը»: Նա դէմ էր նաև միստիկականութեամբ համակուած և զանազան կախարդանքներով պարապող հեթանոս սպիրիտիստ Մաքսիմոսին.—«եթէ ևս կայսերական

իշխանութիւն ունենայի՜ր, ասում է նա իր ընկեր Ագաթօնին՝  
 այդ հեթանոսի գլուխը արծաթէ սկուտեղի վրայ դրած քեզ  
 ընծայ կ'ուզարկէի՜ր:

Բայց միև կողմից Յուլիանոսը խոստովանում է, որ չէ  
 կարող պալատական օտը՝ տանել և Կ. Պօլիսը նա համարում  
 էր բազիլիկական և մուսուլմանների Բարելոնն, նրա ջերմ  
 տենչանքն էր ազատուել մայրաքաղաքի ճնշող մթնոլորտից և  
 առժամանակ կլասիկական կրթութեան հայրենիքում՝ Յունաս-  
 տանումն ապրել: Ըստ ներքուստ իմաստութեան բարեկամ եմ՝  
 —այսպէս է արտայայտում երիտասարդ իշխանը իր հոգեկան  
 ծարաւը: Պատմութիւնից արդէն յայտնի է, որ Յուլիանոսը մա-  
 նուկ ժամանակ՝ ներքինի Մարզօնիուսից ձեռք էր բերել կլա-  
 սիկական կրթութեան և հին փիլիսոփայութեան առաջին ճա-  
 շակը: Այս սկզբնական սաղմերը մի կողմից և իմաստասէր Լի-  
 բանիոսին հանդիպելը միև կողմից՝ աւելի և աւելի են արթ-  
 նայնում նրա մէջ մայրաքաղաքից հեռանալու և Աթէնքում ի-  
 մաստասիրութեամբ պարապելու ցանկութիւնը: Լիբանոսը  
 պալատը և եկեղեցին համարում է «մի կրկնակի վանդակ», իսկ  
 Յուլիանոսին՝ այս վանդակի «բանտարկեալը» — «այն ինչ իմ  
 բուերը», ասում է հեթանոս իմաստասէրը, «չեն կարող Բիւ-  
 զանդիայի եկեղեցական լոյսին դիմանալ»: «Ասան ինձ, սակայն,  
 ինչ ես փնտռում դու Աթէնքում» — վրայ է բերում հարցասէր  
 Յուլիանոսը. — «Ե՛նչ էր փնտռում Պոնտոս Պիղատոսը» — պատաս-  
 խանում է յոյն իմաստասիրութեան աստղը:

— Ճշմարտութիւն — սա է գրաւում Յուլիանոսին:

Ե՛րուք, գալիլիացիներդ ճշմարտութիւնը հալածել էք —  
 նկատում է Լիբանիոսը:

Այս յանդիմանախառն նախատինքի առաջ Յուլիանոսը մի  
 ցանկութեամբ է միայն պապակում — ճշմարտութեան ճանա-  
 պարհով մի նոր Պօղոս առաքեալ դառնալ «Աստուածային գոր-  
 ծի համար»:

Լիբանիոսը իր խօսակցութեան շարունակութեան ընթաց-  
 քում Յուլիանոսին անուանում է «մաքի և հոգու Աքիլլէս»: Այս  
 դարձուածքը Յուլիանոսին ակամայ յիշեցնում է իր մօր երազը  
 — մայրը Յուլիանոսի ծնուելուց առաջ երազում մի Աքիլլէս էր  
 ծնել:

Բայց Լիբանիոսը աւելի հեռու է գնում — «Կայ մի մեծ,  
 հրաշալի աշխարհ, որի առաջ դուք, գալիլիացիներդ, կոյր էք...  
 սակայն ես ճանաչում եմ մէկին, որ այս մեծ, լուսապայծառ  
 թագաւորութեան մէջ իշխան կարող էր լինել»:

—Այն, երանութեան կորուստով միայն—նկատում է Յուլիանոսը:

—Ի՞նչ է երանութիւնը՝ եթէ ոչ վերստին մութիւնը սկզբնականի հետ—պատասխանում է հեթանոս իմաստասէրը: Յուլիանոսի նղբայրը՝ Գալլոս խորհուրդ է տալիս նրան իր հետ միացած վրէժխնդիր լինել Կոստանդին կայսրից—«ծիրանի հագած մարդասպանից», որովհետև փառասէր և արիւն-տուշտ կայսրը իրանց համարեա ամբողջ ցեղը ընալինջ էր արել: Յուլիանոսը հրաժարւում է այս մտքից, որովհետև մի կողմից դա իրան հակաքրիստոնէական էր թւում, միւս կողմից՝ նա համոզուած էր, որ ինքը աւելի մեծ գործի համար է ընտարւած: Վերջը հանգամանքներն այնպէս են դասաւորուում, որ Գալլոսը կայսերական շնորհների արժանացած՝ իբրև ցէզար ուղարկւում է Ասիա՝ պարսկական պատերազմները վարելու: Իսկ Յուլիանոսը խնդրում է կայսրից թոյլ տալ իրան Պէրգամոն գնալ, ուր այդ ժամանակ վարդապետում էր Էլօյզիոսը:

—«Դ՛ո՛ւ հեթանոսների մէջ»—ղարմացած նկատում է կայսրը:

—«Սա կամենում եմ սովորել՝ ափեմների հետ կռուելու համար—պատասխանում է ամաքի և հոգու Աքիլլէսը»:

Յուլիանոսի խնդիրքը կատարւում է. նա գնում է Պէրգամոն, որտեղից, առանց կայսրին իմաց տալու, շուտով անցնում է դէպի Նիկոմիդիա, այնուհետև դէպի իր իսկական նըպատակակէտը՝ Աթէնք:

Իմաստութեան և ճարտասանութեան հայրենիքում Յուլիանոսը հանդիսաւոր ընդունելութիւն է գտնում. Լիբանիոսը գրկախառնւում է նրա հետ և անուանում է իր ամեծ եղբայրը: Այստեղ նա շուտով բարեկամական մտերիմ կապեր է հաստատում Գրիգոր Նազիանզացու և Բազիլիոս Կեսարացու հետ:

Աթէնքում նա մի կողմից հետզհետէ հեթանոսական տրամադրութեամբ է համակուում, իսկ միւս կողմից Լիբանիոսին աւելի մօտիկից ճանաչելով՝ հիասթափւում է նրանից: Իր ժամանակուայ ամենամեծ իմաստասէրի վարդապետութեան և նրա սեփական կեանքի մէջ նա տեսնում է մի խոշոր անդունդ: Նա չէ կարող հաշտուել այն իրողութեան հետ, որ ճմարտութեան անունով խօսող փիլիսոփան յանկարծ քծնում, շողջորթում է կայսրին—«միթէ՛ նա չէր շողջորթում նաև ինձ՝ առաջին անգամ Պօլսում հանդիպելիս»: Նա համարում է մի մեծ ծաղր, հեգնութիւն, որ Սուրբատի և Պրատոնի ամբիոնը Լիբանիոսի պէս մարդկանց ձեռքն է ընկել: Մի խօսքով՝ նա գալիս է այն եզ-

բակացութեան, որ «Լիբանիոսի վարդապետութիւնը մեծ է, իսկ ինքը Լիբանիոսը մեծ մարդ չէ»:

Բայց Յուլիանոսը հետզհետէ հիասթափուում է նաև քրիստոնէութիւնից, Չորրորդ դարու քրիստոնէութիւնը, յիրաւի, մի շատ խառնակ և տխուր պատկեր էր ներկայացնում: Կ. Պօլսում ուսումնասնածարաւ իշխանը մօտիկից արդէն ականատես էր եղել պալատական և ուրիշ բարձր շրջաններում տիրող քրիստոնէութեանը, նրան շատ լաւ ծանօթ էր նաև եկեղեցու ներկայացուցիչները՝ հոգևորականութեան և նրանց հետևող հօտի քրիստոնէութիւնը, որ զանազան հերձուածողական պատակաւորները և դաւանաբանական անպէտք մաքառումները շուրջն էր միայն պտուտում: Եւ երբ Բաղրիլիոսի քոյրը՝ բարեպաշտ Մակրինան մի նամակով յայտ է տածում, որ Յուլիանոս կը փրկէ քրիստոնէութիւնը—այն ժամանակ վերջինս Դիօզինէսի լապտեր է պահանջում մի իսկական քրիստոնեայ որոնելու համար և լքուած սրտով հարցնում է.—«Ո՞ր է քրիստոնէութիւնը»—«Սուրբ մարդկանց գրուածներում»—պատասխանում է Բաղրիլիոսը.—«Միշտ մի և նոյն յուսահատեցնող պատասխանը», շարունակում է Յուլիանոսը՝ «Գրքեր և միշտ գրքեր: Գնում եմ Լիբանիոսի մօտ՝ լսում եմ—գրքեր, գրքեր, ձեզ մօտ եմ գալիս՝—գրքեր, գրքեր, գրքեր, Հացի փոխարէն քարեր: Ես գրքերի պէտք չունեմ. կեանքի քաղցն է ինձ տանջում, հոգու հետ անմիջական հաղորդակցութիւնը: Միթէ Սաւուղը գրքի միջով դարձաւ մարդարէ. միթէ լուսոյ ճառագայթը չէր, որ նրան երևաց, մի տեսիլ, մի ձայն...»:

Յուլիանոս Աթէնքում չը դատու «առիւծը» և Սաւուղի նման խաւարում խարխափելիս՝ մի լոյս, մի տեսիլ, մի ձայն է որոնում: Այս միտաիկական տրամադրութեան մէջ սով կարող էր նրան աւելի օգտակար լինել՝ եթէ ոչ սպիրիտիստ Մաքսիմոսը, որ այդ ժամանակ Եփեսոսումն էր գտնուում:

Յուլիանոսը հեռանում է Աթէնքից տանելով իր հետ միայն մի կարևոր դաս. այդ այն է, որ «հին գեղեցկուքիւնը այլ եւս այնքան գեղեցիկ չէ եւ նոր հեմարտուքիւնը այլ եւս այնքան հեմարիթ չէ»: «Հին գեղեցկութիւնը» հեթանոսութիւնն է, իսկ «նոր ճշմարտութիւնը»՝ քրիստոնէութիւնը: Իր ընկերներից և բարեկամներից բաժանուելուց առաջ՝ նա բացարձակապէս յայտարարում է—«Երբ թերահաւատներ էք... Միայն երկու ճանապարհ կայ ձեր առաջ՝ դպրոցը և եկեղեցին»:—«Սակայն գիտնա թո ճանապարհը սուր է վերջանալու»—հարցնում է Գրիգոր Նազիանզացին.—«Այնտեղ, ուր ճանապարհը և նպատակը միանում են»—պատասխանում է սրամիտ Յուլիանոսը՝ նա գնում

է Եփրատի ափերին, Թաւուտ անտառներում ճեղգու կայսրութիւնը՝ քարոզելու:

—Այս իշխանական պատանին վտանգաւոր է գիտութեան համար—նկատում է Լիբանիսը հրաժեշտի ժամանակ:

—Ձեռն շատ աւելի վտանգաւոր է, քան թէ կարծում էք—վրայ է բերում Բաղիլիսը:

Մաքսիմոսի օգնութեամբ՝ Յուլիանոսը մի ձայն է լսում լոյսի միջոց, որը յայտնում է թէ նա մի նոր թագաւորութիւն պէտք է հիմնի:

—Քննչ ճանապարհով, հարցնում է Յուլիանոս:

—Աղաատութեան ճանապարհով— պատասխանում է ձայնը:

—Աստ ինձ, որն է աղատութեան ճանապարհը:

—Անհրաժեշտութեան ճանապարհը:

Իսկ երբ Յուլիանոսը հարցնում է թէ՛ ինչ ոյժով ինքը պէտք է հիմնի նոր թագաւորութիւնը—ձայնը պատասխանում է.

—Վալքի ոյժով:

—Ի՞նչ պէտք է կամենամ,—հարցնում է Յուլիանոսը:

—«Այն, ինչ որ պէտք է կամենաս»,—պատասխանում է ձայնը:

Սակայն Յուլիանոսը այս հակասական պատգամներից ոչինչ չէ հասկանում և իրան դիմում է ղրոյսի և մուլի մէջը: Այն ժամանակ Մաքսիմոսը հետեւեալ բացատրութիւնն է տալիս. «Երեք թագաւորութիւններ կան: Առաջինն այն է, որ հիմնուած է ճանաչողութեան ծառի վրայ. երկրորդը՝ Քրիստոսի խաչափայտի վրայ. իսկ երրորդը խորհրդաւորութեան և գաղտնիքների թագաւորութիւնն է, որը հաւասարապէս թէ՛ ճանաչողութեան ծառի և թէ՛ խաչափայտի վրայ է հիմնուած, որովհետև երկուսն էլ ատում է և սիրում, որովհետև նրա կեանքի աղբիւրը և՛ Եղեմուսն է և՛ Գողգոթայումը:

Այնուհետև տեղի է ունենում ամենախորհրդաւոր երեւոյթը՝ Յուլիանոսը տեսնում է անհրաժեշտութեան զայրոյթի երեք անկիւնաքարերին—կայէնին, Յուդային և ինքն իրան: Թէ ինչ է նշանակում այս երրորդութիւնը—սա մենք շուտով կը բացատրենք:

Յուլիանոսը դեռ այս խորհրդաւոր հողիններովն էր զբաղուած՝ երբ յանկարծ մայրաքաղաքից կայսերական պատուիրակը լուր է բերում, որ Գալլոսը մեռել է և Յուլիանոսը ցեղար է յայտարարուած: Նա թէև շատ լաւ տեղեակ էր, որ իր եղբայրը կայսրի հրամանովն է սպանուած և չը նայելով իր բարեկամների թախանձանքներին—հրաժարուել իր եղբոր արիւնով

ներկուած ծիրանին կրելուց—այնուամենայնիւ ընդունում ցէզարական տիտղոսը, որովհետև դրա հետ կապուած էր նաև կայսեր գեղեցիկ քրոջ՝ Հէլէնայի հետ ամուսնանալու հարցը: Յուլիանոսը սիրում էր Հէլէնային. այն ինչ խորամանկ գեղեցկուհին միայն փառասիրական ձգտումներից զրդուած՝ ամուսնանում է նորընտիր ցէզարի հետ. նրա սիրտը պատկանում էր Գալլուսին և նոյն իսկ ուրիշներին, բայց ոչ Յուլիանոսին:

Ճէզար դառնալուց յետոյ Յուլիանոսը փառաւոր յաղթութիւններ է տանում Ալէմանների և Ֆրանկների դէմ: Սակայն Յուլիանոսի յաջողութիւնները շարժում են կայսրի նախանձը. այնպէս որ վերջինս իբրև շնորհակալական վարձատրութիւն՝ թունաւորուած պտուղներ է ուղարկում նրան: Այս թունաւորուած պտուղները պատահաբար Հէլէնան է վայելում, իսկ Յուլիանոսն ազատուում Հէլէնան մահուան անկողնում զառանցելիս՝ մասնում է իր սրտի գաղտնիքները: «Բարևպաշտ» կնոջ այս վարմունքը մի կողմից և շքիստոնեայ» կայսեր խարդաւանանքը միև կողմից՝ սաստիկ յուզում, զայրացնում են Յուլիանոսին. այնպէս որ վերջինս իր հաւատարիմ զօրքի գլուխն անցած՝ արշաւում է դէպի Բիւզանդիա: Բայց ճանապարհին արդէն տեղեկանում է, որ ապերախտ կայսրն արդէն մեռել է:

Այդպիսով Յուլիանոսը բարձրանում է կայսերական գահը: Սկզբում նա իրան յայտարարում է կրօնական համբերողութեան և հաւատքի անկախութեան կողմնակից. միև կողմից հրաժարւում է պալատական անտեղի շքեղութիւններից և աւելորդ ղեղխութիւններից: Բայց հետզհետէ սկսում է թշնամաբար վերաբերուել դէպի քրիստոնեաները և վերջապէս նոյն իսկ հալածանքի ենթարկել: Նա հրաժարուելով Գալլիլիացուց՝ վերականգնեցնում է հելլենական աստուածների պաշտամունքը— Ապօլլոնի և Վենուսի անունով տաճարներ է հիմնել տալիս: Բայց որքան սաստկանում է կայսրի հակաքրիստոնէական ուղղութիւնը՝ այնքան աւելի ամրապնդւում է քրիստոնեաների մէջ միութեան ոգին և նահատակութեան տենչանքը: Իր նախկին բարեկամները՝ Գրիգոր Նազիանզացին և Ագաթօն քրիստոնեաների գլուխն անցած ընդդիմադրում են «Ուրացողին», աւելբում են նրա հիմնած կռատունները: Մի անգամ երբ Յուլիանոսը իբրև քահանայապետ պատրաստուում էր զոհ անել Ապօլլոնի տաճարում՝ յանկարծ տաճարը կործանւում է: Այս անխորժ երևոյթը սակայն չէ յուսահատեցնում կայսրին. նա իր յայտնի զօրապետներից մէկին ուղարկում է Երուսաղէմ՝ հակառակ ս. Գրքի ասացուածին՝ Սողոմոնի տաճարը վերականգնեցնել տալու. բայց մի սոսկալի երկրաշարժ ոչ միայն խափա-

նում է վերանորոգութեան գործը, այլև տաճարի հին մնացորդներից զքար քարի վրայ չէ թողնուած:

Երբ այս խորհրդաւոր երևոյթներից յետոյ կայսրը դիմում է Մաքսիմոսի օգնութեանը՝ վերջինս հեռաւտես հայեացքով խորհուրդ է տալիս անցնել գալիլիացիների կողմը կամ հաշտեցնել սկայսրը և Գալիլիացին:

— Ի՞նչ շատ լաւ գիտես, որ սա անկարելի է—նկատում է Յուլիոսոս—ինչպէս կարելի է հակասութիւնները հաշտեցնել: Այն, այս Յիսուս Քրիստոսը աշխարհի ամենամեծ խռովարարն է: Ի՞նչ է Իրուտոսը, ի՞նչ է Կասսիոսը նրա հետ համեմատած: Նրանք սպանեցին միայն մի Յուլիոս ցեղարի, իսկ նա սպանում է ամբասարակ ցեղարին և կայսրին: Այլ ևս հնարաւոր է արգելադրել կայսեր և Գալիլիացու մէջ որ և հաշտութեան մասին մտածել: Միթէ երկուսի համար էլ տեղ կայ երկրիս վրայ: Եւ նա ապրում է այս աշխարհում, Մաքսիմոս, Գալիլիացին ապրում է, պնդում եմ ես, ինչքան էլ հրէաները և հոռմէացիք եւ մակաբան թէ սպանել են նրան—նա ապրում է մարդկային ըմբոստ ոգու մէջ:... Իսկ երբ նա ցանկանում է տեղեկանալ Մաքսիմոսից թէ ինչ է լինելու այս անընդհատ մաքաւման վերջը—ե՞նթէ է յաղթելու—կայսր թէ Գալիլիացին—«Երկուսն էլ կործանուելու են՝ թէ կայսր և թէ Գալիլիացին»—պատասխանում է Մաքսիմոսը—երկուսն էլ. այժմ, թէ հարիւրաւոր տարիներից յետոյ, այդ ես չը գիտեմ. սակայն դա տեղի է ունենալու՝ երբ Իսկականը կը գայ:

«Եւ նվ է Իսկականը»—հարցնում է Յուլիանոսը:

— «Եւ, ով որ թէ կայսրին և թէ Գալիլիացուն կուլ է տալու»—պատասխանում է Մաքսիմոսը և յետոյ աւելացնում է որ հրէաները այս գալիք «Իսկականի» մասին մի անուն ունենն—Մեսիայ:

— «Մեսիայ—ոչ կայսր և ոչ փրկիչ»—նկատում է Յուլիանոսը:

— «Երկուսը մէկի մէջ և մէկը՝ երկուսի»:

— «Կայսր=Աստուած. Աստուած=կայսր: Կայսր հոգու թագաւորութեան մէջ և Աստուած մարմնի թագաւորութեան մէջ»:

— Դա երրորդ թագաւորութիւնն է, Յուլիանոս:

— Այն, Մաքսիմոս—սա է երրորդ թագաւորութիւնը:

— Այս թագաւորութեան մէջն է իրականանալու հին խռովարարի խօսքը—«Տուէք կայսրին, ինչ որ կայսրին է պատկանում և Աստծուն, ինչ որ Աստծուն է պատկանում»: այո՛, այո՛, սա է

կայսր Աստուծոյ մէջ և Աստուած կայսեր մէջ—միւ, ցնորքներ, ցնորքներ. բայց ո՞վ է ջախջախելու Գալիլիացու ոյժը:

Եւ Յուլիանոսը մինչև իր վերջին շունչը համոզուեց, որ ոչ ոք ջախջախելու չէ այդ ոյժը:

Քրիստոսամարտ կայսրի վերջնայն է լինում, որ պարտկալիան արշաւանքների ժամանակ՝ Հայաստանի սահմաններում սպանուում է Ագաթոնի ձեռքով: Մահուանից առաջ Յուլիանոսն արդաղակում է. «Ի՛նչ յաղբեցիր, Գալիլիացի»:

Յուլիանոսը կամենում էր «անկարելին»՝ մի կործանուած թագաւորութեան—հեթանոսութեան անունով մարտնչել ընդդէմ Գալիլիացու Բայց այս մաքառման ընթացքում նա ակամայ դարձաւ մի քրիստոսական մեծութիւն—քայքայուած և ընկած քրիստոնէութիւնը անուղղակի կերպով վերակենդանացրեց: Այս տեսակ քրիստոսական մեծութիւններն էին նաև «անհրաժեշտութեան զայրոյթի» միւս երկու «անկրկնաքարերը»—կալէն և Յուզան, որոնք չարն էին կամենում, բայց բարեք գործեցին, որոնցից առաջինը իր եղբայրսպանութեամբ պատճառ դարձաւ «մարմնական թագաւորութեան» սկզբնաւորութեան, իսկ երկրորդը իր մատնութեամբ՝ «հոգու թագաւորութեան»: Բայց սբւրանցից ոչ մէկը ինքնակամ, ազատ չէ գործել. երեքն էլ հանդէս են գալիս իբրև «տիեզերական կամքի» մեքենայ, որը կարծես հարկադրում է անհասներին այնպէս կամենալ՝ ինչպէս այդ անհրաժեշտ է տիեզերական ընթացքի համար: Այս երեք «անկրկնաքարերը» ազատ են այն չափով, որքան դրանք անհրաժեշտութեան, այսպէս ասած, բարձր, անխորտակելի հողանաւորութիւնից չեն վրիպում. նրանք ազատ են, որովհետև կամենում են. բայց նրանք միաժամանակ անհրաժեշտութեանն են ծառայում, որովհետև պէտք է կամենան: Յուլիանոսի մաքովը, ի հարկէ, երբէք չէր կարող անցնել, որ Գալիլիացու դէմ սկսուած արշաւանքի հետեւանքը պէտք է միւս քրիստոնէութեան փրկութիւնը և վերակենդանութիւնը: Բայց այս հետեւանքը պէտք է տեղի ունենար—այդպէս էր «տիեզերական կամքի» տնօրինութիւնը: Եւ այս է պատճառը, որ Մաքսիմոսը քրիստոսամարտ կայսեր դիակի մօտ կանգնած՝ խորհրդաւոր կերպով նկատում է. «Յուլիանոսի հոգու հաշիւը տիեզերական կամքը պէտք է տայ»:

Ըստ երեւոյթին, անշուշտ, մի փոքր տարօրինակ կարող է թուել, որ Իբսէնի նման մի ինդիվիդուալիստ և կամքի ազատութեան կողմնակից՝ յանկարծ անհրաժեշտութեան և «տիեզերական կամքին» այսքան վճռողական, այսքան ճակատագրական դեր է յատկացնում: Բայց անհրաժեշտութիւն ընագիտական-

տիեզերական մտքով և անհրաժեշտութիւն հասարակական-բարոյագիտական մտքով պէտք է տարբերել միմեանցից: Առաջինի առաջ իբրէն խոնարհուում է, ի հարկէ՝ իբրև XIX դարի մի լուսամտի դաւակ, այն ինչ երկրորդի վերաբերմամբ՝ նա ուժեղ կերպով շնչտում է անհատականութեան և ազատ կամքի նշանակութիւնը:

Անհատականութեան ոչնչութիւնը, կամքի անզօրութիւնը, անհրաժեշտութեան և ֆատալիզմի բացարձակ տիրապետութիւնը տրամաբանօրէն, անշուշտ, պէտք է առաջնորդէր դէպի մի յոռետես աշխարհահայեացք: Սակայն իբրէն յայտնապէս խոստովանում է. «Ես պետքիմեստ եմ այն մտքով, որ չեմ հաւատում մարդկային իդէալների յաւիտենականութեանը. բայց ես միաժամանակ օպտիմիստ եմ, որովհետև կատարելապէս հաւատում եմ իդէալների զարգացմանը և բեղմնաւորութեանը»: Իբրէնի յոռետեսութեան մասին մենք դեռ առիթ կ'ունենանք խօսելու. առայժմ նկատենք միայն, որ նա այն կարծիքի է, թէ մեր ժամանակուայ մահամերձ էդէալները մօտենում են հէնց այն դրութեանը, որ նա նկարագրել է «Կայսր և Գալիլիացու» մէջ և որ գալու է «Երրորդ թագաւորութիւնը»: Թէև «հոգու թագաւորութիւնը» կուլ է տուել «մարմնական թագաւորութեանը»՝ այնուամենայնիւ նա վերջնական չէ—կայ և մի երրորդ թագաւորութիւն՝ հոգու և մարմնի թագաւորութեան ներդաշնակութիւնը—խաղաղութեան թագաւորութիւն: Երբ կը սկսուի այս թագաւորութիւնը՝ այն ժամանակ՝ Մաքսիմոսի խօսքի համեմատ «մարդիկ երկրիս վրայ իբրև տսուածներ ապրելու համար այլևս կարիք չունեն մեռնելու»:

«Կայսր և Գալիլիացին» իբրև մեծածաւալ մի դրամա, անշուշտ զուրկ չէ տեխնիկական և բեմական պակասութիւններէ, այնուամենայնիւ դա մի հսկայական աշխատութիւն է և, կարելի է աշխարհի, իբրէնի ամենահոյակապ գործը:

Ձ.

Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

(Նը օտրուակուի)